

Ավտոմոբիլային մրցարշավ

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Ճարտարանք

Ատոմոբիլային մրցարշավի կազմակերպիչները երթուղու երկայնքով տեղադրել են n տեխնիկական սպասարկման կետեր, որոնք համարակալված են 1-ից n թվերով: i -րդ սպասարկման կետում սպասարկման համար պետք է վճարել a_i գումար: Մրցարշավորդները կարող են բաց թողնել իրար հաջորդող առավելագույնը երկու կետ: Բայց առնվազն մեկ տեխնիկական սպասարկման կետից նրանք պետք է օգտվեն: Հարկավոր է հաշվել, թե մրցարշավորդները առնվազն որքան պետք է վճարեն տեխնիկական սպասարկման համար:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է տեխնիկական սպասարկման կետերի n ($1 \leq n \leq 100$) քանակը: Հաջորդ տողում տրված են իրարից մեկական բացատանիշով անջատված n դրական ամբողջ թվեր, որոնցից յուրաքանչյուրը չի գերազանցում 100-ը:

Ելքային տվյալներ

Պահանջվում է արտածել մեկ թիվ՝ տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ մինիմալ գումարը:

Օրինակ

Մուտք	Ելք
7 3 4 10 15 12 2 8	12

Բացատրություն

Մինիմալ գումարը ստացվում է, եթե ավտոմեքենան սպասարկվի 3-րդ կետում և 6-րդ կետում: